312
Ъ-11

13685
9 .09. 2013 8840
25 SEP 2006
08 DEC 2006

Հ. Ս. Խ. Հ
ԿԵՆՏՎԻՃՎԱՐ

Խ. Ս. Հ. Մ.

Ա. Ս. Ֆ. Խ.
ԿԵՆՏՎԻՃՎԱՐ

1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

Ձև № 8

312
Հ-11
4032-73

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ընտանեկան թերթիկները կազմվում են միայն քաղաքներում և քաղաքատիպ բնակավայրերում:

2. Ընտանեկան թերթիկները կազմվում են. ա) ընտանիքի համար, բ) միայնակների համար, ըստ որում վերջիններիս համար էլ տրվում են թերթիկի բոլոր հարցերի պատասխանները, ինչպես որ ընտանիքների համար:

3. Ընտանեկան թերթիկներ չեն կազմվում՝ հյուրանոցներում և զորանոցային տիպի հանրակացարաններում (հիվանդանոցների, բանտերի, զորանոցների, մանկատների) ապրողների համար:

4. Ընտանիք ասելով հասկացվում է՝ միևնույն բնակարանում միասին ապրողների մի ընդհանուր հավաքականություն, որոնք իրար հետ միացած են ազգակցական կապերով և որոնց ծախքերի բյուջեն մեկ է: Բացի դրանից ընտանիքի կազմի մեջ մտցնել այն ազգականներին, որոնք թեյեվ նրա հետ միասին չեն ապրում մի

13685

բնակարանում, բայց գտնվում են նրա մի վորևե անդամի լիակատար խնամքի ներքո։ Այն ազգականները, վորոնք թեյով ապրում են միևնույն բնակարանում, բայց առանձին տնտեսություն են պահում, ընտանիքի կազմի մեջ չեն մտցվում. նրանց համար կազմվում են առանձին ընտանեկան թերթիկներ։

Նմանապես ընտանիքի կազմի մեջ չմտցնել նրա մոտ վարձով ապրողներին և իր ծառային. նրանց համար ևս կազմել առանձին ընտանեկան թերթիկներ։

Ցուցակագրվող ընտանիքի հետ մի բնակարանում չապրող ազգականներից նրա կազմի մեջ մտցնել և 12-րդ հարցում հիշել նրանց միայն, վորոնք բոլորովին ապրում են ցուցակագրվող ընտանիքի միջոցներով։ Իսկ այդ ազգականները, վորոնք, թեյով նրանցից ոգնություն են ստանում, բայց դրանից բացի ունեն իրենց սեփական վաստակը կամ մի վորևե ուրիշ յեկամուտ, կամ նյութական ոգնություն են ստանում նաև վոչ այդ ցուցակագրվող ընտանիքի անդամներից, 21-րդ հարցում չգրել։

Այն սովորողները (ուսանողություն և աշակերտություն), վորոնք ապրում են ընտանիքից առանձին, գրվում են այն ժամանակ միայն, երբ թոշակ չեն ստանում, և չունեն վաստակ կամ ուրիշ յեկամուտ։

Կարմիր բանակայինները, յեթե շարունակ տվյալ բնակարանում չեն ապրում, ցուցակի մեջ չգրել։

Ընտանեկան թերթիկներում չեն գրվում այն ազգականները, նույնիսկ ամենամոտիկները (կինը, զավակները), վորոնք շարունակ ապրում են գյուղում և այնտեղ գյուղական տնտեսության անդամներ լինելով ապ-

ՀԱՍՈ ԱՍՈՒ ՍՍՌ

րում են նույն այդ տնտեսությամբ, թեկուզ ցուցակագրվող ընտանիքից կամ միայնակից այս կամ այն ձևով (դրամ ուղարկելով, և այլն) նյութական ոգնություն էլ ստանալիս լինին։

Ընտանիքի կազմի մեջ մտած չեն համարվում նրանք, ովքեր դատական վորոշմամբ անունդ են ստանում ցուցակագրվող ընտանիքի անդամների մեկն ու մեկից։

5. Անձնական թերթիկներից տարբերվելու համար, ընտանիքի անդամների ցուցակում գրվում են նրա մշտական կազմին պատկանողները, այլ վոչ թե միայն ներկա յեղողները, այդ պատճառով էլ ընտանիքի ժամանակավորապես բացակայող անդամները գրվում են թերթիկի 21-րդ հարցում, իսկ ժամանակավորապես ներկա գտնվողները չեն գրվում։

2. ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այն հարցերը, վորոնք վերաբերում են՝ վիճակագրական չրջանին, հրահանգչի չրջանին և ցուցակագրողի չրջանին, ցուցակագրողը լրացնում է հրահանգչի ցուցմունքով։

Ընտանեկան թերթիկը ցուցակագրողի կողմից համարակալվում է ըստ տվյալ բնակարանի սահմաններում։

Ընտանեկան թերթիկի 1-ին և 2-րդ հարցերը լրացվում են համաձայն կալվածաթերթի հրահանգի 1-ին բաժանումի 2-րդ և 3-րդ կետերի և 2-րդ բաժանումի 2-րդ կետի։

ՀՀ Ազգային գրադարան
NL0189242

3, 4, 5–րդ հարցերը։—Ընտանիքի գլխավոր համար-
վում է նա, ով տալիս է ապրուստի գլխավոր միջոցները։
Ընտանիքի գլխավոր գրվում է միայն մի հոգի։

4 և 5–րդ հարցերը լրացվում են համապատասխան
անձնական թերթիկի տեղեկություններով։

8–րդ հարց.—Առանձին բնակարանի հասկացողու-
թյան բնորոշումը, տեսնել կալվածաթերթի հրահանգի
2–րդ բաժանմունքի 12–րդ հարցի 5–րդ ենթահարցում
(առանձին բնակելի կացարան)։

9–րդ հարց.—Բնակելի սենյակների մեջ չեն մտնում՝
խոհանոցները, հաշտերը (կորիդոր), խորդանոցները
(чулан), վաննայի սենյակները և այլ սպասարկու
կացարանները, թեկուզ նրանք բնակելու տեղ էլ ծառա-
յելիս լինեն։ Սակայն մի բնակարան բաղկացած մի
սենյակ–խոհանոցից, համարել բնակելի սենյակ։ Առան-
ձին սենյակներ չընդունել սենյակի միայն այն մասերը,
վորոնք իրարից բաժանված են չարժական պատերով
(այսինքն չարժական պատեր չեն մտել հատակի ու ա-
ռաստաղի մեջ)։

Ամբողջապես զբաղեցրված համարել այն սենյակ-
ները, վորտեղ ապրում են միմիայն 6–րդ կետում հաշվի
առնված, ցուցակագրվող ընտանիքի անդամները. մաս-
նակի զբաղեցրված՝ նրանք, վորոնց մեջ, բացի ընտա-
նիքի անդամներից, տեղավորված են տվյալ ընտանիքին
ոտար, 6–րդ հարցում հաշվի չառնված անձնավորու-
թյունները։

11–րդ հարց.—Բնակելի տարածություն ասելով պի-
տի հասկանալ բնակելի սենյակների տարածությունը։
Բնակելի տարածությունը գրվում է կամ քառ. մետրե-
րով, կամ քառ. արշիններով, նայած թե ցուցակագրո-

ղը, մարդահամարը կատարող հիմնարկությունից ինչ
ցուցմունք է ստացել։ Յեթե պետք է գրի մետրերով, այդ
դեպքում, մինչև մարդահամարը սկսելը, ցուցակագրո-
ղը բոլոր թերթիկներում պիտի ջնջի «քառ. արշին» սյու-
նյակը և ընդհակառակը։ Յեթե հարցման յենթարկվողը
պատասխանները տալիս է այլ չափերով, որինակ. յե-
թե ցուցակագրողին պատվիրված է գրել քառ. մետրե-
րով. իսկ հարցման յենթարկվողը տարածությունը տա-
լիս է քառ. արշիններով, այն ժամանակ ցուցակագրո-
ղը նրանց վերածում է, ընդունելով մի քառ. մետրը հա-
վասար 2 քառ. արշինի և ընդհակառակն։

11–րդ հարցում ցույց է տրվում տվյալ ընտանիքի
վրա հաշված ամբողջ բնակելի տարածությունը, այ-
սինքն, այն տարածությունը, վորը հատկացրված է
նրա ոգտագործման համար վարձով կամ ձրի, տնային
վարչության, տնատիրոջ կամ քաղաքապատկան դար-
ձրած (մունիցիպալիզացիայի յենթարկված) տան վար-
ձակալի կողմից, անկախ նրանից, թե ընտանիքն ոգտա-
գործում է արդյոք, իրեն հատկացրած ամբողջ տարա-
ծությունը թե նրա մի մասը տալիս է ոգտվելու վարձով
կամ անվարձ, սպասավորին կամ տվյալ ընտանիքի կազ-
մի մեջ չմտնող կողմնակի անձանց։

Իր տան մեջ ապրող տնատիրոջ համար, նշանակ-
վում է այն սենյակի բնակելի տարածությունը, վորտեղ
նա ապրում է, դուրս գալով վարձու տրված տարածու-
թյունը։

Իրենց բնակելի տարածությունը չունեցող ընտա-
նիքների ու միայնակների համար, այսինքն այն տարա-
ծությունը, վորն հատկացրված է այդ ընտանիքին կամ
միայնակին վարձով կամ առանց վարձի անմիջականորեն

անային վարչությունից, տնատիրոջից կամ քաղաքապատկան դարձրած այն վարձակալի կողմից, 11-րդ հարցում նշանակել «չկա»։ 12—14 հարցերը բաց են թողնվում, իսկ 16-րդ հարցում ցույց տալ այդպիսի ընտանիքի կամ միայնակի զբաղեցրած բնակարանի տեսակը։

Այդպիսի ընտանիքների (միայնակների) թվում հաշվել։ ա) նրանց, վորոնք ապրում են ուրիշի բնակելի տարածության վրա, այսինքն այն տարածության, վոր վարձով կամ անվարձ հատկացրված է այն անձի (ընտանիքի) կողմից, վորին վոր պատկանում է այդ բնակելի տարածությունը։ բ) անբնակելի կացարաններում ապրողներին (խոհանոց, խորտանոց (чулан), ցախատուն և այլն)։ Առաջինների համար 9-րդ հարցում մատնանշվում է այն բնակելի սենյակների կամ սենյակամասերի թիվը, վոր փաստորեն նրանք զբաղեցրած են, 11-րդ հարցում գրել «Չկա», իսկ 16-րդ հարցում գրել «ուրիշի բնակելի տարածության վրա»։ Ցերկրորդների համար 9-րդ հարցում գրել «Վոչ», իսկ 12-րդ հարցում՝ «չի հաշվում», իսկ 16-րդ հարցում ցույց տալ այն անբնակելի կացարանի տեսակը, վորտեղ ապրում է ընտանիքը։

19-րդ հարց։—Ամուսնական զույգեր հաշվել նրանց միայն, վորոնցից թե մարդը և թե կինը տվյալ՝ ընտանիքի անդամներն են կազմում և յերկուսն էլ գրված են թերթիկի 21-րդ հարցի ցուցակում։ Այդ դեպքում չգրանցված ամուսնությունը հավասարեցնել գրանցվածին։

21-րդ հարց։—Այդ հարցի ցուցակում ընտանիքի անդամները գրվում են վորոշ կարգով, ընտանիքի մե-

ծից անմիջապես հետո։ Նախ կինը (կամ թե ամուսինը, յեթե ընտանիքի գլխավորը կինն է), ապա զավակները։ Հետո նրանց նախորդ ամուսնությունից ծնված զավակները (յեթե այդպիսիները կան) և վերջապես ազգականները, սկսած ծնողներից, ըստ վորում այն ազգականները, վորոնք շարունակ չեն ապրում տվյալ բնակարանում գրել վերջում։

Ընտանիքի գլխավորի նախորդ ամուսնությունից ծնված զավակների համար 3-րդ սյունակում գրել «տղան», «աղջիկը», իսկ 4-րդ սյունակում «նախորդ ամուսնությունից»։

Նրա կնոջ (մարդու, յեթե ընտանիքի գլխավորը կինն է) նախորդ ամուսնությունից ծնված զավակների համար 3-րդ սյունակում գրել «խորթ տղա», «խորթ աղջիկ»։

Ընտանեկան թերթի մեջ 5 և 10-րդ սյունյակները ներառյալ ընտանիքի ներկա յեղող անդամների մասին տվյալները վերցվում են համապատասխան անձնական թերթիկներից, իսկ ընտանիքի բացակայող անդամների մասին տեղեկությունները հավաքել ընտանիքի գլխավորից, կամ ընտանիքի վորևե անդամից, հարցման միջոցով։

5-րդ սյունակում սեռը նշանակել այսպես «արական», «իգական»։

Գյուղում հող ունեցող համարել նրանց, ովքեր հողարաժին են ստացել գյուղում։ Դաշտային աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ հարցին 14-րդ սյունակում չպատասխանել։ ա) ով վոր գյուղում հող չունի,

բ) ով որ հոգ ունի, բայց նա ամբողջովին տվել է վարձով կամ թողել է անմշակ։

Ընտանեկան թերթիկի ներքևի աղյուսակը (նրա անկամների ցուցակից հետո) ցուցակագրողը չի լրացնում։



ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպ· 2261 գ· Պատ· 653 Տիրաժ 500